

ԶՈՋԱՆՅ ՏՈՒՆ

(Շարունակութիւն)

Բացի այդ այստեղ կան հետաքրքրական նորութիւններ: Այս կողմից նախ աչքի է ընկնում Քուռիկի Ճալալ ձիու ծագումը, մասամբ և բացատրութիւնը (№ 15, էջ 63—64 ծանօթ.): Այս ձին յիշում է և Քաջանց տան վէպում, որի զլխաւոր դիւցազն է Արշակ Բ. Անուշ և Շիրին շահ անունով: Եւ որովհետեւ այստեղ նկարագրած Քուռիկի Ճալալու ծագումը շատ նման է Քէօռ-Օղլու Ղաթ ձիու ծագման, ուստի մեր ունեցած այլ ապացոյցների վրայ աւելանում է մի նորն ևս, որ Քէօռ-Օղլին մեր Արշակ Բ. է. իսկ այդ ձին յիշեցնում է մեզ Տիրան Բ.-ի, Արշակ Բ.-ի հօր, հռչակաւոր Ճարտուկ Ճանճէկէնը, որի համար պատերազմ ծագեց Պարսից և Հայոց մէջ¹, և որը, եթէ Քաջանց վէպում «Թուր Կէժակի» հետ միասին յիշուած «Բոզ ձին Աքակին» չէ, անշուշտ մեր Քաջանց տան մի փոփոխակում «Քուռիկ Ջալալու» հետ անմիջապէս յիշուած «Բօզրէ-Դաւին»² է (№ 6, էջ 523²): Այս երեք անուններից վերջինը նշանակում է սպիտակ, զլխակաւոր կամ խայտեր ունեցող ձի, որ յատուկ է Քաջերին³ և Քաջքերին⁴, ուրեմն և

1. Փ. Բուզանդ, Գ. Ի—ԻԱ, էջ 49—58, Վենետիկ 1889.

2. Այս ձին «Բոզ-Բէդաւին» յիշում է Ասլան աղայի ժողովրդական երգում (Գարեգին սարկ. Յովսէփեանց «Փշրանքներ» ժողովրդական բանահիւսութիւնից էջ 5—9. Թիֆլիս 1895). եւ «Մոկաց Միրզէն» երգում «Բոզ-Դիդաֆին» անունով (Անդ, էջ 19): Երկու ձին էլ մի աւելի հաստատուն ապացոյց են Արշակ Բ.-ի Քէօռ-Օղլին լինելուն: Ինչպէս Քէօռ-Օղլին բացի Ղաթից ունի եւ մի Բ.-ը Արաթի կամ Գորաթ. այնպէս էլ Արշակ Բ.-ի հայր Տիրան Բ.-ը պիտի ունեցած լինի. որ սակայն Խորենացին վերագրում է Տիրան Ա.-ին (Խորեն. Բ. ԿԲ). Դատար. Դատարէ, Դատարէն նախարարի անունը. որ յիշում եւ Բուզանդում Խոսրով Բ.-ի ժամանակ եւ երկուսի մէջ էլ Բզնունի է կոչում, Ղիդաֆի Ե, ինչպէս որ Տատեանք-Տատեանք (Խորեն. Բ. ԿԲ. 140) փոխուել է Տէատէն (Ալիշան, Այրարատ, Ի, § 209. էջ 517). Ղրաթը հաւանօրէն Տրդատ-Արտաշէսի «սեւ գեղեցիկ» ձին է. ինչպէս որ Թուր Կէժակին կամ Հաւունի սուրը, որ յիշում է եւ Դաշանց թղթում, նորանն է. ապա անցած Տրդատ Մեծին եւ խր յաջորդներին. բայց այս մասին այլ տեղում:

5. Ատենահաս Ս. Սարգիսը սպիտակ կամ բոզ ձի ունի: Վասակ սպարապետի որդի Մուշեղ Մամիկոնեանն էլ «ձերմակածի» է (Բուզանդ. Ե. Բ. 194. Վենետիկ 1889. Հմմտ. Մեսրոպ երէց. Պատմ. մնացորդաց Հայոց եւ Վրաց. Ե. էջ 87—88 Մադրաս 1773. Սովիեր Զ. ԺԱ. էջ 70. Վենետիկ 1833):

4. Սերէոս. Պատմ. Գ. Գ. էջ 58. Ս. Պետերբ. 1879.

Քաջանց տան դիւցազններ Ջիւան շահ—Տիրան Բ.-ին և Շիրին շահ—Արշակ Բ.-ին:

Բայց ի՞նչ է նշանակում Ճալալի կամ Ջալալի Քուռկիկ ձին: Այդ անունով մի քուրդ ցեղ այժմ էլ բնակւում է Հայաստանում, որքան մեղ է յայտնի, Մասիսի շուրջը. և որովհետեւ քուրդները յայտնի են իրանց ձիասիրութեամբ, լաւ նժոյգներով, որոնց ցեղաբանութիւնը պահւում է թղթով սերունդէ սերունդ, ուստի Քուռիկ Ճալալի կարող է նշանակել այդ ցեղի ձի, ինչպէս ասում են արաբական, անգլիական ձի և այլն: Պէտք է կարծել, որ Քուռկիկ Ջալալին յիշուել է և Քէօռ-Օղլու դիւցազներգութեան մէջ, ուստի և Առաքել Դաւրիթեցին Քէօռ-Օղլուն համարում է ժ. Դարու վերջերում ապրող Ջալալի քուրդ իշխան¹: Սակայն ով որ կարգացել է Ա. Դաւրիթեցու պատմութեան մէջ Ջալալի քուրդների, այս մարդ հրէշների, արարմունքը մեր երկրում, դժուար կարողանայ հաւատալ, որ մի այսպիսի հրէշ ցեղի հրէշաւոր իշխանը մի երկրի պատուհաս լինելով հանդերձ՝ նորա ժողովուրդներին սիրելի դիւցազն դառնայ: Գուցէ կարելի էր կարծել, որ Ջալալիների մէջ էլ եղել է որ և է մէկը Քէօռ-Օղլի անունով, ինչպէս որ 1795—1840 թուականը Տրապիզոնի կողմերում²: Բայց երբ Ա. Դաւրիթեցին Քօռ-Օղլու մասին յուշեացնում է. «Որ բազում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշուղներն եղանակեն» և անմիջապէս յարում. «Գիր-օղլի Մուստաֆա բէկ ու մարդով (ապստամբեցաւ ի թագաւորէն)», և սա ևս ընկեր է Քօռօղլոյն՝ զոր յոյով տեղիս ի մէջ իւր խաղին զսա յիշէ», այդ ցոյց է տալիս, որ խօսքը ժողովրդական վէպի դիւցազն Քէօռ-Օղլու մասին է, որ նա շփոթում է մի համանուն ճալալի իշխանի հետ: Քանի որ Քէօռ-Օղլուն է վերագրւում միջնադարեան ասպետների խօսքը. «Երբ վառօդն երեւցաւ, անձնական քաջութիւնը կորաւ», ուստի նա վառօդի դիւտի ժամանակակից է համարուել, և ուրեմն դիւցազն Քէօռ-Օղլին ժ. Դարու վերջերից շատ առաջ էր ապրում:

Արդ մեր այս փոփոխակի ծանօթութեամբ մի այլ մեկնութիւն է տրւում Քուռկիկ Ճալալուն: «Ճալալ էլ ի՞նչ է.—Ճալաթ, այսինքն Ճալաթ, ամենին տաս ոտքի տակ, զարկես սպանես». ուրեմն Ճալաթ նշանակում է ըստ այսմ ջալլաթ, այսինքն դահիճ. մի ժողովրդական անարժէք լեզուաբանական ըացատրութիւն, որով այս երկու բառերը պատահական նմանութեամբ կապուած են: Այսօր էլ ժողովուրդը Գեղարդ ուխտ գնալուց յետոյ՝ ծնած

1. Ա. Դաւրիթեցի Պատմ. է. էջ 87. Վաղարշապատ, 1896:

2. Ս. Հայկունի, Յուսէփի Ազգատոնմ եւ տարօրինակ աւագակ Արիւստ Տրապիզոնի հայ դիւզերու մէջ. § 7. էջ 53. Վաղարշապատ 1903:

տղայի անունը Գեղամ գնեւով իրար է կապում այդ ոչ մի նմանութիւն չունեցող անուններն էլ լոկ պատահական սկզբնական հնչիւնների նոյնութեամբ, որ մեզ յիշեցնում են Խորենացու Արագած, Մասիս և այլ անունների բացատրութիւնները: Սակայն ջալաթ կամ ջալադ ձևը ունին միայն մի քանի փոփոխականներ, 17 փոփոխականներից ընդամենը երեքը⁵. մինչդեռ ֆուսկաները, բացի երկուսից (№ 1 և № 5), որ ընաւ չեն յիշում, բոլորն էլ ինչպէս և ջալաթ բացատրողը ունեն Ջալալի¹, որ մեզ թուում է ճշտագոյնը և Ջալալ անունն սեռականը:

Զիւրքը ընդհանրապէս կոչւում են երկրի անունով. ինչպէս այժմ մեզնում ասում ենք Ղարաբաղի ձի, Արարիոյ ձի՝ Արարաթ, և նայելով գոյնին. ինչպէս ճերմակ՝ Մուշեղինը, դեղին—կարմիր՝ Դորաթը, սև՝ Ղարազայտան² (ղարադատա—սևացեղ), Քէօռ-օղլու Ղրաթը և Տրդատ—Արտաշէսինը. բոլոր ձին Բող-ղիղաֆին և Ս. Սարգսինը, Ճարտուկ³ Ճանճկէն՝ Տիրանինը և այլն: Բայց իմասնաւորի տիրոջ անունով, Ս. Սարգսի, Դիզաֆի, Տիրանի, Մուշեղի, Քէօռ-օղլու, Ռուստամի ևն. այսպէս էլ, կարծում եմ այստեղ է:

Արդ ԺԳ. դարում Սիւնիքում կայ մի հռչակաւոր հայ իշխան Հասան Ջալալ Դօլա (1214—1261) «Տէր Խաչենոյ», «Մեծ իշխան Խաչենոյ և կողմանցն Արցախոյ», «Իշխանաց իշխան արքայաշուք», «Մեծ կողմնակալ», «Ինքնակալ իշխանաց իշխան», «Իշխան Խաչենոյ և Ըռանայ», «Արքայ» և «Մեծ արքայ» տիտղոսներով կոչուած մեր յիշատակարաններում, արձանագրութեանց մէջ և պատմագիրներին: Սա խնամութեամբ կապուած է եղել Արղութեանց, Տարսայիճ

5. «Քուռկէ—Ջալալին» (№ 5 Ա. փոփոխակ, Գ. էջ 29. 50). Քուռկէ—Ջալաղին» (№ 42. դ. էջ. 66—68. Քուռկէ—Ջալաղ. դ. էջ 72) եւ «Քուռկէջալաթ» կամ «Քուռկէջալաղ» (№ 45 էջ 7-8 (41—42). 42 (46). 22—24 (56—58) եւայլն:

1. «Քուռկիկ—Ջալալին» № 2 (Ձ. էջ 21—24 եւայլն.). № 5 (Բ. փոփոխակ, Գ. էջ 25. իսկ 56 էջում երկու անգամ «Քուռկէ—Ջալին», երեւի սխալմամբ). № 7 (էջ 25. 26. 71. 72). Քիւռկիկ—Ջալալին № 8 (էջ 6 52—55. 44). № 4 (Գ. էջ 104). № 9 (էջ 581—582 եւայլն) եւ Քիւռկիկ—Ջալալէն № 11 (էջ 22. 51). որ ունի եւ Քէօռկիկ եւ Քէօռիկ Ջալալին (էջ 29) ձեւերը. եւ «Քիւռիկ Ջալալին» № 4 (Ա. եւ Բ. փոփոխականներով. Գ. էջ. 104—107 եւ այլն). № 10 (էջ 428. 410) եւ № 11 (էջ 49). վերջապէս «Քուռիկ Ջալալին» № 6 (էջ 525 2).

2. Գարեգին սարկ. Յովսէփեան. Փշրանքներ. Ձան-Փոլաղ էջ (90—401). 94. Քիֆիս 1895:

3. «Ճարտուկ» եւ «ճերմակ» բառերը տես եւ H. Hübschmann-ի Armenische Grammatik, էջ 189—190. Leipzig 1895:

Օրբէլեանի, Թաթարների (Ռուզուքան—Ռուզան) և մեր Ռուբինեան հարստութեան հետ: Եղել է Թաթարստանում և մասնակցել Թաթարների արշաւանքներին Իկոնիոյ Ղայասէդզին Քայ Խոսրով Գ. ի դէմ և հասել ուրիշների հետ մինչև Կարին, Երզնկայ և Սեբաստիա: Այս արշաւանքներին, որ աւելի մի յաղթական թափօրի է նմանել, ազատել է «յայանի և դադանի» շատ քրիստոնեայ գերիներ: Սիրելի է եղել Բաշուին, Չարմաղանին, այնուամենայնիւ մողոլ Բուղան,—անուանակից թուրք Բուզայի, Չոջանց վէպում Բաթմանայ Բուզէի,—քանզում է Ջալալի բերդերը, չարչարում նորան, բայց Ջալալը Ոսկէ—Օրդայի խան Բատիի որդու Սարտակի օգնութեամբ ետ է ստանում, սոցա հետ դնում է Մոնղոլիա, շատ հայ իշխանների օգնում ևլն ևլն: Ջալալը նշանաւոր է և իւր երկրից դուրս բարեգործական հաստատութիւններով իւր կին Մամքանի հետ, որ Հաղրատայ Ջարեհ իշխանի քոյրն էր:

Չնայելով որ Ջալալը մակդիր է. «Բայց այդ մակդիրը այնպէս է կպել Հասանին, որ աւելի յաճախ միայն այդ անունով է կոչւում է առանց բուն անունն, հաւանօրէն բառական բազմաթիւ այլ Հասանների հետ չլիութեալ համար» (էջ 411) ասում է Օրբէլին: Մենք պիտի աւելացնենք և այն, որ Չնայելով այսօր էլ այդ ցեղի ազգանունը Հասան—Ջալալեան է, անշուշտ մեր Հասան—Ջալալի անունով, սովորաբար միայն Ջալալեան է կոչւում:

4. Հասան Ջալալ Դուլայի եւ իւր տոհմի մասին տեղեկութիւնները մենք բաղում ենք I. A. Орбели, Гасанъ Джалаля, князь Хаченскій (Извѣстія Императорской Академіи Наукъ, էջ 405—456 С.-Петербург, 1909) սիրուն աշխատութիւնից: Հեղինակը քննելով մի ժողովրդական աւանդութիւն, որով այս Ջարեհը զտնում է ժամանակակից Աշոտ Ողորմաճին (Ռոստոմբէզ Նրդնիեանց, Հնախառական Տեղագր. Հաղրատայ, էջ 92—97. Վաղարշապատ 1886. Արատատ. Արարատ Ամաղրից) եւ անհնարին համարելով այդպիսի կոպիտ սխալ մի կեղծած դրաւոր ազգիւրում, կասկածում է եւ աւանդութեան իսկութեան վրայ (էջ 415. ծանոթ. 4): Մենք յամենայն դէպս մի քան կարող ենք հաստատապէս ասել ի պաշտպանութիւն Նրդնիեանի, որ նա այս աւանդութիւնը հաւանօրէն բաղել է Տիկիսի «Արարատ լրագրի 1850. Ն. 6. էջ 81—84. Ն. 7. էջ 104—107. Ն. 9. էջ 124—155 «Արդար դատաստան Աշոտոյ Հայոց Թագաւորի» անսորազի պատմութիւնից, որի նիւթը, ճիշդ ինչպէս միեւնոյն լրագրի 1851 թուականի Ն. 48, էջ 278—282 «Հնարագիտութիւն Սմբատ Հայոց Թագաւորի կնոջ՝ Մարիամ Թագուհւոյ» պատմութեւնը, անպայման ժողովրդական է (Հմտ. էմինեան Ազգագր. ժողովածու, Դ. § 11 «Գտածուրիկ փաթէն» էջ 89—92), բայց թէ թիվ է դրի առել կամ չարագրել, մնում է անյայտ:

Արդ այս Զաւալի հայր Վախտանկ Տոնկիկը մի զարմանալի ձի պիտի ունեցած լինի: Վրաց տարեգիրները պատմում են, որ Թամարա Թագուհու մարդը՝ Դաւիթ Սոսլանը, Զագամի ճակատամարտին, Շամքորի մօտ, նստել էր մի ձիու վրայ, որ գնել էր Վախտանկ Խաչենացուց, ոչ աւել և ոչ պակաս քան մի բերդ և մի գիւղ վճարելով (էջ 407):

Խնդիրն այն չէ, թէ որքան պատմական է այս դէպքը, այն էլ բաւական է, որ ժամանակի մատենագիրներ հաւատացել են և հաղորդում են. կարելի է ուրեմն երեւակայել, թէ ինչպիսի չափազանցութիւններով այդ ձիու գովքը կը հնչուէր Հայոց աշխարհի բոլոր կողմերում, որտեղ անծանօթ չէր Զաւալը իւր քաջութիւններով, բարի գործերով և եղբրական վախճանով: Հասկանալի է, որ մի ձի չէր կարող այսքան երկար ապրել, բայց նորա սերունդը յաջորդաբար նոյն անունով կը կոչուէր. և Ձոջանց տան վէպում յիշուած է, որ ժառանգ դիւցազնի ձին իւր հօր ձիու սերունդից էր:

Մի նորութիւն ևս ունի այս փոփոխակը, այն է Բապը Ֆրէնկի (№ 15, Թ, § 317—337): Այս անունը «Պապէ, Պապը Ֆրէնկէ աղջկ» կայ և մի հէքեաթում¹. այլ և ունի Ձոջանց տան № 1—13 փոփոխակներից միւսն ևս «Բաբա Ֆրէնկի և Ֆրէնկի Պապ» (№ 10, էջ 424, 430), որին ինչպէս և Աստղիկ Պարոնին, Աճմուշահին և Սուլթան Մուրադին դիմում է Մսրայ մելիքը և օգնութիւն խնդրում: Ձոջանց վէպը ճիշտ պահել է Ֆրանկի այսինքն Եւրոպայի պապի մասին գաղափարը, որ խաչակրութեան առաջնորդը և հոգին է եղել. իսկ Եւրոպայի ժողովուրդներից, մանաւանդ առաջին խաչակրութեան յատկապէս ֆրանկներն են մասնակցել, ուստի և արեւելքում, ֆրանկ, ֆրանկստան Եւրոպա, ֆրանսացի և կաթոլիկ է նշանակում: Պարզ է որ այստեղ խօսքը հոովմէական կաթոլիկ եկեղեցու պետ պապի մասին է. թէ որքան պատմական հոգ ունի յատկապէս № 15-ի միջնագէպը դժուար է պնդել, գուցէ այստեղ Մհերի գործը անցել է Դաւթին, — մեր Ձոջանց փոփոխակներում չատանգամ մէկի գծերը միւսին են անցնում, — իսկ Մհերը նոյնացել է մեր Մլեհի հետ²: Ապա յայտնի է մեր Կիլիկեան իշխանների և Թագաւորների ջերմ մասնակցութիւնը և յարաբերութիւնը խաչակրութեան հետ: Խաչակրութեան ազդեցութիւնը յատկապէս երևում է և պարոն տիտղոսից, որ կրում է այստեղ և այլ ուրեք Աստղիկը (№ 2, 7), որ այլապէս կոչուած է Աստղիկ Երզնկացի (№ 3, Բ):

1. Էմինեան Աղգ. Ժողովածու Դ. § 6 «Առաստուր Մորթ», էջ 55:

2. Ձոջանց տան պատմականը [Արարատ 1908. Յունուար, էջ 113 — 114 (39—40)],

Պարոն կոչւում են և № 14-ի մի քանի դե—դիւցազները, որ բռնել է մեր իշխան կամ նախարար անուն տեղ: Այս են հաստատում Դաւթի աջ թևի մէջ խաչը, կրած ս. նշանը, «խաչ պատրաստին», կամ փետրադին (խաչ փարանգ—խաչապաշտ) ևն: Յայտնի է, որ խաչակիրները խաչ էին կրում իրենց աջ թևին, որից և ծագել է այդ անունը: Խաչը իւր պաշտամունքով մեղմում սկսուելով է. դարից՝ տարածուել է խաչակրութեան ժամանակ դանազան մասունքներով, որ ունի և վէպը (№ 1, Դ, էջ 13). ցարդ շատ «օջաղ» —տներ ևս ունին Կարմիր Աւետարան, Նարեկ և այլ սրբութիւններ: Հետաքրքրական է այս կողմից այն պարագան, որ մեր վիպասաններից մինը, Բարսամբ, Ջոշանց տան վէպն ասելուց յետոյ՝ վերջն աւելացնում է իբրև «բարեխօս» 90-ից աւելի սրբավայրերի, սրբերի, վանքերի, ժամերի, նարեկների, աւետարանների և խաչերի անուններ (№ 10, էջ 450—462):

§ 6. Այժմ անցնենք մեր № 14-ին. որ ոչ միայն այս երեքից, այլև հրատարակուած բոլոր փոփոխակներից ամենահետաքրքրականն է: Նախ բարբառը, Հայոց ձորի, նոր է. ունի բացի աշխարհագրական նոր յատուկ անուններից և անձնանուններ, մանաւանդ կանանց: Սոցանից մի քանիսը հաւանօրէն լոկ գովասանական մակդիրներ են, ինչպէս որ քառսուն—ձող—ծամ շատերի մակդիրն է. և մի քանի փոփոխակներում դարձել է յատուկ անձնանուն. մինչդեռ տղամարդկանց մակդիրը կրկնւում է միշտ անձնանուն հետ. Ջէնով Յովան, Սարգիս, Յուան Վէգօ, Ջոջ և Պատիկ Դաւիթ, Մհէր, Առիւծաձև Մհէր, Թաւլան—Թլոր—Թլուատ Դաւիթ, Ճոռ Վիրապ, խոր—Գուսան, Վժիկ Միս և այլն: Եւ ինչպէս այդ մակդիրները դիւցազների այս կամ այն յատկութեան բնորոշ արտայայտիչն են, այնպէս էլ կանանց անունները նոցա գեղեցկութեան. այսպէս Սիւռաթ—պատկեր, Կիւլակ—խոպոպիք կրող, Կիւլիզար կամ Կիւլիզար—վարդոսի, Խանդուտ կապուած է խանդ, վառվռուն բառի հետ և Սաւան, Սինամ (անշուշտ Սանամ, որ շփոթուել է № 6-ի Սինամ—քերիմ՝ Սենեքերիմ արական անունան ազգեցութեամբ) այսօր էլ հայ կանանց գործածական անուններ են:

Ինչպէս սոքա այնպէս էլ Գոհար (№ 3 Ա, Պահիկ՝ թագաւորի

4. Ղ. Փարպեցին ունի «Պանոկ ի Մարդպետական գեղեկ» (Պատմ. Գ. Ղ., էջ 462. էջմիածին—Տիֆլիս 1904). այսինքն ցեղից (gens,-tis): Սա Վահանի «ուխտակից»ներից էր, որ զնաց պատգամաւոր նիստրի մօտ: Հետաքրքրական է որ այս պատգամաւորների մէջ էր Մամիկոնեանց խնամի Կամարականը. այստեղ էլ հաւանօրէն մարդպետական—Արծրունիների Մամիկոնեանց հետ ունեցած խնամութեան հետքն է,—պատմութիւնից լայտնի,—որ պահել է վէպը:

աղջիկ, և № 7, 10, 16), Դեղձուն (№ 3 Բ, 10 Բ), Շիրին Անախուն Գիւհար (№ 11), Փիրզատ և Նազլու (№ 13) մնում են անյայտ, թէ ինչ պատմական անձեր են, գլխաւորապէս այն պատճառով, որ մեր պատմութիւնը կանանց շատ քիչ տեղ է տուել, ուստի և կանանց քիչ անձնանուններ են յայտնի: Հազիւ ուրեմն Շմշիկ (№ 12) և Իսմիլ (№ 4, Գ, էջ 80—83) կամ Իսլիմ² անունների մէջ հնչւում է Շամիրամ և Իշտար անունների հետքերը, որ պատմութեամբն էլ յիշեցնում է սորա և Արայի աւանդութիւնը¹:

Բոլորովին նոր են. առաջին խոսքով թագաւոր, — որ ցարդ ոչ մի փոփոխակէտէն, — որի հօրը Մարամելիքին Դաւթի սպանկոյց յետոյ՝ նորան թագաւոր է անում (№ 14, § 104): Այս խոսքովի դէպքն անշուշտ յուշիկ է Սասանեան խոսքով Նուշիրուանի, խոսքով Պարուէզի և Ֆերրուս կամ խորեզմա խոսքովի պատմական անցքերի, որոնց մէջ հայերը և յատկապէս Մամիկոնեանք դեր են խաղացել. այսպէս ըստ Սերէտի և Յովհան Մամիկոնեանի մի Մամիկոնեան Մուշեղ² խոսքով Ապրուէզի կուսակից է, իսկ մի ուրիշը՝ Խաւթի որդի Մուշեղը մասնակցել է Հերթիւնի (= Կադիսի ջայի) կռուին 636/37 թուականին³, թերեւս սա կամ իւր հայրը, Դաւիթ, օգնել են և վերջին խոսքովի դահ բարձրանալու:

Երկրորդ հետաքրքրական է շատ այստեղ Պարան Պոռ կամ Պոթ և Պարան Բուէք ֆրոնսայ դիւցազնների իբրեւ «դեբեր» հանդէս գալը (№ 14, § 116—118, 120): Դե, ֆէրդ, փահլան, ինչպէս Բաջանց վէպի ուսումնասիրութեան մէջ ցոյց եմ տուել հոմանիշ բառեր են և նշանակում են քաջեր, դիւցազններ: Պոռը՝ տարակոյս չկայ, մեր պատմութեան մէջ ԺԳ. դարում յայտնի հայ իշխանն է, որ Պարան այսինքն սլաւոն է կոչւում: Պոռը յայտնի է ոչ միայն Հիւսիսային Հայաստանում այլ և հարաւում. Բաղէշում ցարդ կայ Պոռեան մի ազգատոհմ, ինչպէս ինձ պատմել է հանդուցեալ Պերճ Պոռեանը: Իսկ Բաղէշի խիզան կամ Հիզան գաւառի Շէնաձոր գաւառակում կայ մի դիւզ «Պոռէնց» անունով⁴: Յայտնի է և Պոռ թագաւորի հրաշագործ թրի աւանդութիւնը կապուած Սաչլուայ⁵ լճի հետ. մի թուր, որ յիշեցնում է

2. Դր. Բալասեան. Սասունցի Դաւիթ. պատմական պոէմ. VII, էջ 12. Թիֆլիզ 1905.

1. Զոչանց տան Պատմականը. էջ 25.

2. Արարատ 1906. Դեկտեմբեր. էջ 872—873 եւ ծանոթութիւն.

3. Արք. Պատմ. Դ. 1. էջ 107. Ա. Պետերք. 1879.

4. Ս. Կիրիկեան. Բնաշխարհիկ բառարան. Բ. խիզան. էջ 174. Վենետիկ 1907.

5. Անդ. «Խաչուտայ լճակ»-ի տակ մէջ է բերուած ամբողջ հետաքրքրական աւանդութիւնը. Այստեղ թուրը շինելու աւանդութիւնը միեւնոյնն է. ինչ որ Քէօռ-Օղու Զիֆկարինը.

նախ Բէօռ-ողլու Զլֆկար թրի պատմութիւնը և ապա թուր Կե-
ծակին, որ Հաւլունի թուրն է:

Այս առթիւ հարկ եմ համարում յայտնելու, որ ես Զոջանց
վէպի մէջ պատմականը փնտռելով և ի նկատի առնելով, որ Սան-
դուտ Խաթունին ուզող և Դաւթի հետ կռուող դիւցազնները մէջ
միայն օտար անուններ կային, ես Համզան օտար համանուն
իշխան եմ համարել¹: Բայց այժմ տեսնելով և հայ Պոօշ իշխա-
նին նոցա թուում, աւելի հաւանական եմ համարում, որ մեր
վէպի փոփոխականներում «Լօռուայ Համզայ փահլեանը» (№ 1, էջ 19,
21, 22), «Լօռու, Լօռուայ Համզէն» (№ 13, էջ 31), 37—39 (65, 71
—73 և № 3, էջ 46) հայ իշխան լինի: Եւ ըստ ամենայն հաւանա-
կանութեան վէպի Համզան ժ. դարում ապրող իշխան Պահլաունի
Գրիգոր Համզէն² է, որ իւր կին չքնաղ Շուշանիկի հետ նշանա-
ւոր են թողած յիշատակներով: Պահլաունիք Լօռուայ սահմանի
մօտերը կալուածքներ ունէին Բջին, Չաղկաձոր—Դարաշիշազը,
ինչպէս յայտնի է Մ. Ուռնայեցու տարեգրութիւնից և Կեչառու
վանքի արձանագրութիւններից. բացի այդ Գրիգոր Համզայի թոռ
Գրիգոր Մազիսարոսի կալուածքն են կոչել «Կայան և Կայծօն»³,
որոնցից առաջինը այժմ էլ իւր աւերակներով և միւսնոյն անունով
յայտնի Լօռուայ Կայանու բերդն է: Դիլիջանի մօտ էլ կայ Բողի
կամ Համզա գիւղ և Ղազախի մի գաւառամասը կոչւում է սոյնպէս
Համզա⁴: Ուստի և շատ հասկանալի է Գրիգոր Համզայի Լօռուայ
Համզայ կոչումը: Այս Գրիգոր Համզէի որդի Վահրամն էլ յայտնի է,
որ ոչ միայն մեզնում, այլ և Վրաց մէջ դիւցազնական հռչակ է
վայելել⁵, ինչպէս և երբեմն Վահագն Վիշապաքաղը⁶:

Վերել մենք տեսանք խաչակրութեան ազդեցութիւնը մեր
Զոջանց վէպի վրայ. ուստի մեզ թուում է Պարան Բուէքը,
որ միշտ կոչւում է «Պարան Բուէք Ֆարնսայ» (№ 14, § 116, 117,
120), պէտք է լինի Ֆարնայ, այսինքն Ֆոանի: Ֆարնտայ՝ անծա-
նօթ բանահաւաքը բացատրում է փակագծում, որ մենք ներքև
դրինք, «Թեաւոր, թոռացիկ»: Այստեղ ժողովրդական ֆոալ, թերես
ֆորն+ալ բայով է բացատրուած: Բայց մեզ թուում է, որ այդ
ժողովրդական բացատրութիւնը նման է ջալալ—ջալաթի մեկնու-
թեան և հէնց այդ հնչման նմանութեան շնորհիւ Հայոց Զորում

1. Արարատ Ամս. 1906. Ապրիլ. էջ 558—544, ծանօթ. 3.

2. Ալիշան, Շիրակ էջ 52—53. Կ. Կոստանեան. Գր. Մազիսարոսի
ձգձերը ԺԱ. էջ 45 եւ յառաջարան ԺԿ—ԺԵ. Ալեքսանդրապոլ 1940.

3. Վարդան վրդ. Պատմ. ՄԵ. էջ 99. Վենետիկ 1862.

4. «Սուրճանդակ» լրագիր, 1910. № 154, էջ 4. Թիֆլիս:

5. Կ. Կոստանեան, Գր. Մազիսարոսի ձգձերը. ԺԱ. էջ 59—40.

6. Խորեն. Ա. 1. 57—58.

ժամանակին անծանօթ Ֆրէնկի-ն դարձել է ֆոն Կայ, դերին հասկանալի մակդիր⁷։ Մենք տեսանք, որ ժողովուրդը հնչիւններին նմանութեամբ բոլորովին տարբեր ծագում ունեցող բառերը նոյն է համարում. բացի այն որ մի քանի բարբառներում կ'է տ' ձայներին փոփոխութիւններ կան։ Այսպէս պոռնգ կամ պոռկ (որից պոռշ, պոռշտի) խոյեցիք ասում են «պոկէ պոռկ», բայց կայ «պոռե պոռնգ լիքը»¹։ «Ուսկա կուգաս»² և Պօլսում «ուսկէ» փոխանակ ուսորի, «Հերիք չէ», որ գաղտուք երթաս գաս»³, այսինքն գաղտուկ, գաղտնի։ Եւ մեր Զոջանց տան վէպի Յուան—Վերթօ—Վեթօն երկու փոփոխակում դարձել է Վերթօ—Վեթօն (№ 16 և 13)։ Ուստի մեզ թուում է, քանի որ Ֆոնտայ Բուեք դեր լինի խաչակրութեան մասնակցող Ֆրէնկ Բողուէններից մինը և թերեւ Բուվենի դիւցազն Ֆիլիպ Բ. Օգիւստ Ֆրանսիոյ թագաւորը, որ եռանդազին մասնակցել է երրորդ խաչակրութեան։

Այժմ, կարծում եմ, կարելի է ասել, թէ ո՞վ պիտի լինի այն Օհան Աղբակեցին, որին, Դաւիթը մի աւերակ վանք նորոգելով, նշանակում է պահապան վերակացու (№ 3, Գ. էջ 32—33 ծանօթութիւն)։ Անկասկած այստեղ խօսքը Հաղբատ կամ Աղբաւ վանքի մասին է, որ շփոթուել է Վասպուրականի Աղբալ գաւառի անունն հետ. երևի բացի անուան նմանութիւնից և այն պատճառով, որ երկուսն էլ նշանաւոր են վանքերով։ Մենք արդէն ցոյց ենք տուել, թէ ինչպէս Զոջանց տան վէպը Դաւիթ Անհողինը իշխում էր Լոռիին, որտեղ են նշանաւոր Հաղբատ ու Սանահին վանքերը, իրար շատ մօտիկ։ Արդ' այս վանքերը ծագել են ԺԱ.—ԺԳ. դարերում. վարդապետների սպանութեան դէպք, մեր վէպի նման, պատմում է և այժմ, թէև, եթէ չեմ սխալւում, Սանահնում։ Եւ Լանկթամուրի արշաւանքին դէպի Հաղբատ, պատմում էին ինձ տեղացիները, եկեղեցին աւերել են, վարդապետներին տանջել և այլն։ Այս երկու պատմութեանը ստուգում են Ամիր Սպասալար Մխարբրձեւու արձանագրութեամբ⁴. Հաղբատը հոչակաւոր է և իւր

7. «Դեւր... քեւաւորք». Զենոր, էջ 52. Վենետիկ 1889.

1. Տ. Նաւասարդեանց, Հայ ժողովրդական հերթաներ Գ. զիրք. էջ 29. Թիֆլիզ 1884. և Ե. զիրք, էջ 44. Տփլիս 1889.

2. Էմինեան Աեգազր. ժող. Բ. § 3, էջ 135. Զարսանճակի բարբառ.

3. Անդ. § 22, էջ 524. Բաղէշի բարբառ.

4. Ռոստում քէզ Երզնկեանց, Հնախօսական Տեղագր. Հաղբատայ աշխարհագրական վանից Արրոյ նշանի. Արտատպ. Արարատ Ամսագրից. Բ. էջ 9. Վաղարշապատ 1886.

հրաշագործ Սուրբ Նշանով, որ համարուում է Վարագայ Ս. խաչի մասը⁵։ Վերջապէս բացի այն որ այստեղ է թաղուած նշանաւոր Յովնան-նէս սարկաւադ վարդապետը († 1109), որ Հաղբատայ առաջնորդ է եղել։ յիշուում են ԺԲ—ԺԳ դարը Յովհաննէս անուանով չորս առաջնորդ կամ վանահայր, առաջին երեքը յաջորդաբար⁶ և շինարար են եղել։ Այս բոլորից յետոյ պէտք է որ հասկանալի դառնայ Օհան Աղբակեցին Վասպուրականի Աղբակ գաւառի և նորա հռչակաւոր Բարթուղիմէոս վանքի հետ կապ չունի, այլ Հաղբատի Օհաններից մէկն ու մէկն է և կամ շատերն ի մի ձուլուած։

§ 7. Պարոն Աստղիկն այստեղ Սասնոյ թագաւոր է (№ 14, Ա, § 2, 8—9), որ հաստատուում են № 2 և 7, ըստ որոնց պարոն Աստղիկը Վերգոյի տղան է. մինչդեռ ըստ մի այլ փոփոխակի նա ծագմամբ անյայտ է և Երզնկացի, կոչուում է «չար Աստղիկ» և սպանւում է Պատիկ Մհէրից, որ Աստղիկի նշանած Դեղձոնը, Փիրմուս հալիւորի աղջիկը, խլից և կին տուաւ Խանդուլի եղբայր Քեռի Թորոսիկի որդուն, Խոր-Մանուկին (№ 3, Դ, էջ 55—56)։ Աստղիկ Պարոնի Ջոջանց ցեղի հետ թշնամի լինելը երևում է և մի այլ փոփոխակից, ուր Մսրայ մելիքը Սասունի վրայ արշաւելիս դիմում է «եօթ թագաւորի» օգնութեան, որոնցից յիշուում են միայն Բարա Ֆրէնկին կամ Ֆրէնկի Պապը, Աստղիկ Պարոնը, Աճմու շահը և սուլթան Մուրադ (№ 10, Բ, էջ 424—425 և 430)։

Մեզ թւում է, որ աւելի ճիշտ է Աստղիկի Սասունցի լինելը, որի բազինը կար Սասունի կողքին Աշտիշատում, կից Բաջու-թեան աստուած Վահագնի մեհեանին, որի կինն էր. ինչպէս որ այս փոփոխակում Աստղիկի աղջիկը՝ Սառանը, «Քաջանց թագաւորի լաճու» կինն է դառնում։ Եւ եթէ Աստղիկի դուստրը ջրով է յղանում և դաւակնեւր ծնում, ըստ հնագոյն ժողովրդական երգի Վահագն ինքն էլ ծիրանի ծովից է ծնւում։ Աստղիկի թոռ Սանասարն էլ կին է առնում Քաջանց թագաւորի աղջիկ Սուռաթ խաթունը և Տղայ Դաւիթը՝ Կապոտ Կողայ թագաւորի աղջիկ Խանդիւթը (№ 14)։ Եւ որովհետեւ Ջոջ Մհէրի մօրական պապը, Կապուտ-կողի թագաւորը, Պապն է (№ 13), որ յիշուում է իբրեւ Քաջանց թագաւոր Քաջանց տան վէպում. ուստի պարզ է, որ № 13 և 14 պահել են Ջոջանց տան—Մամիկոնեանց և Քաջանց տան—Արշակունեաց փոխադարձ խնամական կապերը¹, ինչպէս այդ պահել

5. Անդ. ԺԲ—ԺԳ. էջ 76—85.

6. Անդ. Ի, էջ 86—87. Հմմտ. Կիր. Գանձակեցի. էջ 56. Վենետիկ 4865:

1. Արարատ Ամս. 1906. Դեկտեմբ. էջ 870. Հմմտ. Ջոջանց պատմականը, էջ 26. Արարատ Ամս. 1907. Հոկտեմբեր, էջ 1007:

է և Քաջանց վէպը. որ երբեմն Մամիկոնեանց ևս ուզում է «Քաջանց» կոչումը տալ, և որ կարծես վաւերանում է Մ. Խորենացու պարսից Պահլաւ տոհմերի ծագման զրոյցով (Խորեն. Բ, ԻԸ, ԿԸ հմմտ. ԼԳ, էջ 110): Մենք հիմքեր ունինք ենթադրելու, որ այդ գրութիւնները վերաբերում են ոչ թէ, ինչպէս Խորենացին ասում է, Պարսից Պահլաւ արշակունիներին այլ հայ. ուրեմն սպարապետի Պահլաւը այդանդ մեր հայոց սպարապետական տունը—Մամիկոնեանք պիտի լինին: Մակայն այս մասին այլ ուրեք:

Միւս կողմից Աստղիկի Երզնկացի կոչումը ևս անհիմն չէ: Յայտնի է, որ Աշտիշատում Վահագնի և Աստղիկի մեհեանին կից էր և Անահտինը, որով կարծես մի մերձաւոր կապ և միութիւն կայ այս երեքի մէջ: Եւ քանի որ Անահտի մի նշանաւոր մեհեանն ևս գտնւում էր Երիզա—Երզնկայի աւանում, ուստի այս դէպքում Անահտը բռնել է Աստղիկի տեղը:

Անհասկանալի է միայն մնում, թէ ինչպէս Աստղիկը մի կողմից Ջոջանց տան թագաւորն է, բայց միւս կողմից թշնամի: Այստեղ իմ կարծիքով երկու աւանդութիւն և հաւատալիք պահպանուած են և ամփոփուած Ջոջանց վէպում: Քաջանց տունը աստուածային ծագումն ունի, այսպէս էլ Ջոջանցը, որ երևում է թէ Քաջանց հետ ազգակցութեամբ կապուելով և թէ մանաւանդ ջրային ծագմամբ, ինչպէս որ Վահագնինն է. թերևս այստեղ Աստղիկն իբրև աստղ երկինքն է, որ նոյնպէս Վահագնի ծնուելուն երկնում էր: Եւ որովհետև Աստղիկ Երզնկացին սպանւում է Պատիկ Մհերից. իսկ սա ինչպէս ցոյց եմ տուել Միհր-արեգակն է, ուստի այստեղ Աստղիկը գիշերուայ, խաւարի, ներկայացուցիչն է հանդիսանում: Այս վերջին աւանդութեամբ ուրեմն պահուած է լուսոյ և խաւարի յաւիտենական կռիւը:

Աւելի դարմանալին այն է սակայն, թէ ինչպէս Աստղիկ դիցունիին Ջոջանց տան վէպում դարձել է դիւցազն, արական անձն: Այս կարող էր բղիւիւ ճիշտ վերջին հանգամանքից. եթէ Պատիկ-Մհերը, ուրեմն Միհր-արեգակը տղամարդ է, նորա հակառակորդ և թշնամին նոյնպէս պիտի լինի. կամ այստեղ չէ՞ ազդել հայ ժողովրդի հաւատալիքը թէ լուսինը, ուրեմն այս դէպքում Աստղիկը, եղբայր է. վերջապէս աստղիները կարող են երկու սեռի լինել, այսպէս Լէյլին ու Մէլլումը, որ Համբարձման գիշերն իրար «ողջունում են»: Հայոց հէքաթնեքից առած Դ. Աղայեանի Արեգնազանը աղջիկ լինելով՝ վերջը տղայ է դառնում: Առհասարակ հայ ժողովրդի հէքաթնեքում կան էլ աւելի շփոթ բաներ. օրինակ մի զրոյցում կայ Ուլի քաղաք¹, որ մի հէքեաթում կոչւում է Ուլի (Ուլիս,

1. Էմինեան Աղղաղը. ժողովածու Բ. § 6 «Բլիւլ Աղջիկ» էջ (165—182) 177:

Ուլի—Ուլէ—Յովան) բազրկան 2—ճիշտ Յովհաննէս վանառականի
և Մարիամ Թադուհու անցքը. և մենք տեսանք նոյնպէս, որ Կում-
բի քաղաքը դարձել էր Ղումրիի Թաղաւոր:

Աւելի ևս տարօրինակ է և մեր Ձոջանց տան վէպում երևա-
ցող Չմշկիկ-Չմուցիկի սուլթանը³: Անտարակոյս սա Բիւզանդիոյ
հայ կայսր Յովհաննէս Չմշկիկն է, բայց սա վէպում կին արմատ է
և կոչւում է «շատ գեղալ փեշուան» (№ 2, ԺԲ, էջ 37): Յայանի
է որ նա շատ հռչակաւոր էր, եղել է Տարօնում և դաշնակցութիւն
ունեցել Աշոտ Ողորմածի հետ: Սորա այս սեռափոխութիւնն էր
միայն, որ մեզ տարօրինակ էր թուում և դժուարացնում ցարդ
այս կարծիքը յայտնելու. սակայն երբ Աստղիկ գիցուին Ձոջանց
վէպում Պարոն և գիւցազն է դարձել, այլևս զարմանալու չէ:

(Շարունակելի)

Սեփան Կանայեան

Անցում գրեք

1, Շահնամակ Ֆիրդուսի-ի, դրուագ Արտաշիւր Բաբական-ի
Թարգմանեց Յ. Թիրաքեան Նիւ-Եօքք 1909. գին 2 ֆր.

2, Ատրպատ Մարասպանտայ Թարգմանեց ի Պահլաւ Ընա-
դրէն հանդերձ ծանօթութեամբք. Յ. Թիրաքեան 1909 Նիւ-Եօքք.

Պատկերացոյց հաւաքածոյ մասնաւոր հնութեանց Մայր
Աթոռոյ Ա. Էջմիածնի և շրջակայից: Հրատարակեց Սահակ Վրդ.
Աստուածատրեան. Պրակ Ա. Տպարան Մայր Աթոռոյ Ա. Էջ-
միածնի, 1910 Թ: Ա. պրակի գինն է մի ռուբլի:

Գրքի հենց արտաքինը լաւ և հաճոյական տպաւորութիւն
է գործում: Գրքի երեսի վերայ կան կենդրոնում՝ Մեծ և փոքր
մասիսները՝ որանց ստորոտում Ա. Էջմիածինը, աջ կողմում
ներկայ Վեհափառ հայրապետի և ձախ կողմում երկրագործ
գեղջիկուհու պատկերները քաւական յաջող և դեղարուեստորէն
դաստաւորում: Գրքի մէջ գետեղուած են Մայր Տաճարի սրբու-
թիւնների, զգեստների ևլն. մի մասի շրջակայ վանքերի լու-
սանկար պատկերները ընդօրինակութիւնը, Թուով 53: Այս

2. Անդ. Դ. § 44 «Գտածուրիկ փարէն», էջ (89—92) 90.

5. № 2. (էջ 57, 46, 47, 54, 52) եւ № 7 (էջ 44—45, 54—56
եւ այլն). Սուլթան Չմշկեր կամ Սուլթան Գըմիժ (№ 3, էջ 40—42, 49—
55). Սըլթան Չմուհ, Չմուլի (№ 44, էջ 58—42) և Սըլթան Չմուշ (№ 9,
էջ 585, 592—595). Այս փոփոխակներից լաւագոյն են № 7 եւ 9.